Աշխարհագրություն – 2020թ. մարզային (քաղաքային) փուլ
Պատասխաններ
/ գնահատման քայլը՝ 0,25 միավոր /
10–րդ դասարան

1. ա) աշխարհի աշխարհագրական պատկերը բ) աշխարհագրական մտածողությունը
գ) աշխարհագրության հետազոտման մեթոդները դ) աշխարհագրության լեզուն։

2. ա) հասարակածային – պատկերվում են հասարակածային գոտու աշխարհագրական օբյեկտները
բ) ազիմուտային (բևեռային) – պատկերվում են բևեռամերձ գոտու օբյեկտները
գ) գլանային – պատկերվում են հասարակածային և արևադարձային գոտիների օբյեկտները
դ) կոնային – պատկերվում են միջին լայնությունների (բարեխառն և մերձարևադարձային) օբյեկտները։

3. Արմավիրի մարզ – Վաղարշապատ, Մեծամոր
Լոռու մարզ – Տաշիր, Ստեփանավան, Սպիտակ, Թումանյան, Ախթալա, Ալավերդի

4. Տունդրայում տեղումների տարեկան քանակը 250 մմ – ից պակաս է, բայց հողի բազմամյա սառածության պատճառով թափված տեղումները չեն կարողանում ներծծվել և մնում են հողի մակերեսին։ Բացի այդ, փոքր է գոլորշունակությունը, քան թափված տեղումների քանակը։ Ցուրտ կլիմայի պատճառով փոքր է նաև գոլորշացումը։ Հետևաբար, Երկրի մակերևույթի վրա առաջանում է ջրի ավելցուկ և ձևավորվում են ճահիճներ։

5. «Առևտրային պատերազմը» համաշխարհային առևտրում արտահանման մեծ մասնաբաժին ունեցող երկրների՝ ԱՄՆ – ի, Չինաստանի, Ճապոնիայի, Ռուսաստանի և այլն, միջև սուր մրցակցությունն է սպառման շուկաներ նվաճելու և սեփական շուկաները մրցակիցներից պաշտպանելու նպատակով։

6. Միջազգային տնտեսական միասնացումը աշխատանքի աշխարհագրական բաժանման բարձրագույն ձևն է, երբ տնտեսությունների մասնագիտացման և փոխանակության խորացումը հանգեցրել է առանձին երկրների ազգային տնտեսությունների սերտաճմանը։ Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է ԱՊՀ – ին, ԵՏՄ – ին և Սևծովյան տնտեսական համագործակցությանը։

7.

	Բնական գոնայի անվանումը	**Բնորոշ հողատիպը (երը)**
1.	Արկտիկական անապատ	կմաղքային (սաղմնային)
2.	Տունդրա	տունդրագլեյան, տորֆաճահճային
3.	Տայգա	պոդզոլային
4.	Լայնատերև անտառ	գորշ անտառային, դարչնագույն
5.	Տափաստան	սևահող, մուգ շագանակագույն
6.	Անապատ	գորշ անապատային, բաց շագանակագույն
7.	Սավանա	կարմրագորշ, կարմրադեղին
8.	Հասարակածային խոնավ անտառ	լատերիտ, կարմրադեղին

8. Սև ծովի աղիությունը 18 ‰ է՝ 1 լիտր ջրում 18 գրամ աղ։ 1 մ³ – ում (1000 լ) կլինի՝ 1000 x 18գ = 18 000 գ աղ։

9. ա) Երկրի բնական աճը կլինի՝ 15 000 000 – x | x = 180 000 մարդ։
1 000 – 12
բ) Մեխանիկական աճը կլինի՝ 30 000 – 10 000 = 20 000 մարդ։
գ) Բնական աճ + մեխանիկական աճ՝ 180 000 + 20 000 = 200 000 մարդ։
դ) 1 տարի հետո երկիրը կունենա՝ 15 000 000 + 200 000 = 15 200 000 մարդ։

10. 1. ճիշտ է 2. սխալ է 3. ճիշտ է 4. սխալ է 5. ճիշտ է 6. սխալ է։
11. 1. սխալ է 2. ճիշտ է 3. սխալ է 4. սխալ է 5. ճիշտ է 6. ճիշտ է։
12. մեզոզոյան
13. 2. կերակրի աղը։